ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Պ.ա. ԵՂԲ. ԺԱՄՀԱՐԵԱՆՆԵՐԻՑ ստացանք քսան ռուբլի «Մուրճի» երկու օրինակը իբր նէր նոցա կողմից ուղարկելու՝ Շուշւայ Հայոց Բարեգործական Ընկերութեան դրադարանին և Շուշւայ Հայոց Թեմական Դպրանոցին։

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ ներկայ համարում տպագրած յօդուածը «Հիպնոտիսմ» ակիզբն է մի շարք յօդուածների հիպնոսական երևոյթների մասին։

Բժշկ. Վ. Արծրունին խնդրում է մեզ յայտարարել հետեւեալը։

«Մտադրելով մի հետազօտութիւն անել մեր ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող սնապաշտութիւնների և նախապաշարմունքների մասին, խնդրում եմ մեր բանիմացներին, բժիշկներին, ուսուցիչներին, քահանաներին տեղեկութիւններ ուղարկել ինձ իրանց երկրում նկատուած աչքակապութիւնների, կախարդութիւնների, հմայութիւնների, պաշինների, ուխտատեղերի և այնտեղ կատարուած բժշկութիւնների, տեսիլքների, ընկնաւորութիւնների, դիւահարութիւնների, քաչքոտութիւնների, աւանդութիւնների և զանազան սնապաշտութիւնների մասին։ Խնդրեմ օրինակներ և դէպքեր հաղորդել։

Կարևոր տեղեկութիւնները կը փչեն աշխատանքիս մէջ, և կը տանեն նրանից մի օրինակ։

Հասցէ՝ Тифлисъ Доктору В. М Арцруни.

«ԱՂԲԻՒՐ» և «ՑԱՐԱՋ» պատկերազարդ թերթերի ընդարձակ յայտարարութիւնը տարածուեց «Մուրճի» անցեալ № 11-ով մեր բոլոր բաժանորդներին, թէ Թիֆլիսի և թէ դրսի։ «Աղբիւրը» 1892 թւականին մտնելու է իւր գոյութեան տասնամեայ շրջանը, որը թերթի խմբագրութիւնը մտադիր է տօնել մի տօնախմբական համար հրատարակելով։

ԹԵՄԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ կաթողիկոսական ընտրութիւնների համար Թիֆլիսի թեմում դեռ ևս յայտնի չէ թէ երբ են կատար-

ւելու։ Մեզ թուում է թէ աւելի լաւ է ուշ կատարել, քան վաղօրոք, ժամանակ տալով ընտրող ժողովրդին աւելի լաւ մտածել իւր կատարելիք ընտրութիւնների մասին։ Այդ պատճառով մեզ թուում է թէ հարկաւոր եղածից շատ շատ-պել են Շամախու թեմը (ընտրած է պատգամաւոր Պ. Ա. Լալայեանց։ կանդիդատ?) և Ատրպատականի թեմը (ընտրած են պատգ. Թումանեանց և կանդիդատ Պ. Ալ. Մելիք-Ազարեանց)։ Բայց մեզ թուում է թէ ընտրութեան օրը աւելի լաւ է վաղօրոք յայտնել և ոչ թէ յանպատրաստից հրաւիրել ժողովուրդը ընտրութիւններ կատարելու։ Նոյնպէս գերազանցելի է որ ընտրուել ցանկացողների մասին առաջուց յայտնի լինի։

Թիֆլիսի թեմի պատգամաւոր ընտրելու ցանկութիւն են յայտնել պ. Դրիգոր Արծրունին խմբագիր «Մշակ» լրագրի և, որպէս հաղորդում են նաև մի քանի այլ առանց որոշ գոյնի անձեր։ Այդ առիթով մենք հարկ ենք համարում նկատել հետևեալը.

Մենք կարծում ենք, որ այն անձերը, որոնք հասարակական ու քաղաքական որոշ հայեացքներ չունին կամ գոնէ յայտնի չեն այդ կողմից հասարակութեան մէջ—պէտք է ասպարէզը չը դան, որ նոյնն է թէ ժողովուրդը պէտք է քէ տալ միմիայն այն անձերին, որպէս պատգամաւորների, որոնց ուղղութեան մասին նոյն այդ ժողովուրդը, կամ սորանից ընտրուած ծխական պատգամաւորները որոշ ու իրանց ուղղութեանը նպաստաւոր կարծիք ունին։ Այդ իսկ պատճառով ցանկալի է թեմական պատգամաւորութեան թեկնածուները իրանց ուղղութիւնով յայտնի անձնաւորութիւններ լինեն, և ոչ թէ ընտրելը միայն անձնական պատուի ինդիր համարուի։ Կրկնում ենք, ուրեմն, որ ըստ ամենայնի ցանկալի է թեկնածու դառնան միմիայն այնպիսի մարդիկ, որոնց անունների հետ կարելի լինի կապել որ և է ուղղութիւն, մարդիկ, որոնց հասարակական գործունէութիւնը որոշ գոյն ունի. մարդիկ որոնք որոշ հեղինակութիւն են վայելում ինտելիգենտ հասարակութեան մէջ։ Բէ՛ տալ մի պատգամաւոր ընտրելու ցանկացողի համար նպանակում է հաւանել նորա ասած կաթողիկոսական ընտրութիւնը, հաւատալ նորա ուղղամտութեանը։ չիտակութեանը, հեռատեսութեանը կաթողիկոսական ընտրութիւնների գործում։ Դորա համաձայն էլ ընտրելիները պէտք է որոշ գոյնի մարդիկ լինեն, որպէս զի ժողովուրդը թիւրիմացութեան մէջ չընկնի ծխական պատգամաւորներ ընտրելիս, իսկ սոքա էլ թեմական պատգամաւոր ընտրելիս։

Թեմական պատգամաւորութեան խնդրին գալ ամիս խոստանում ենք վերադառնալ։

Պր. ԵՂԻՇԷ ՄԱԴԱԹԵԱՆԻ յօդուածի վերջը, որ այս №-ի համար էր նշանակուած, մեզ ուշ հասած լինելու պատճառով, կը տպւի յաջորդ համարում 1892 թ. № 1։ Այս №-ում։

ԱԳՈՒԼԻՍԻՑ հաղորդում են մեզ, որ առաջարկութեամբ Էջմիածնի Ս. Սինոդի Ագուլիսի հասարակութիւնը ընտրել է իւր միջից պպ. Մելիք փանեանցին և Յովհաննէս Կոստանեանցին, որ նրանց յանձնւի Էջմիածնի կառավարութեան տնտեսական մասը։

ՀԵՂԻՆԷ վէպը վերջացաւ ներկայ համարում։ Որպէս առաջին մասը, նոյնպէս և այժմ վերջացած երկրորդ և վերջին մասը լոյս կը տեսնի առանձին հատորով։ Երկու մասերի գինը միասին կ'արժենայ «Մուրճ»-ի բաժանորդների համար 1 ռուբլի, 20 կոպ. իսկ ոչ բաժանորդների համար 1 ր. 75 կոպէկ։

ՎՐԻՊԱԿՆԵՐ. «Մուրճ» № 11։ Գրախօսութեան մէջ (Եղիշէի պատմութիւն և այլն), երես 1393, առաջին սիւնեակում տպւած Ապրնձի պէտք է լինի Ապրնձի,
ղեն « » ղեհ (կողմ)։
երկրորդ սիւնեակում տպւած է՝ Անկանէլն ի տեղիս յարմարս,
պէտք է լինի՝ Անկանէլն ի տեղիս տեղիս յամուրս։
Երես 1395, երրորդ սիւնեակ.
տպւած է փաշտիպան, պէտք լինի փուշտիպան։
Attalea-Princeps-ի մասին ցաւում ենք որ, բոլորովին պատահաբար, նա տպւեց առանց երրորդ սրբագրութեան և այդ պատճառով նորա մէջ սպրդնել են սովորականից աւելի սխալներ, որ չտապում ենք ուղղել.

Երես 1277		Ներքևից 4	տող տպւած է՝ նրանց	պէտք է լինի՝ նրանք
»		23	բուսական «	» բուսաբանական
»		10	արձակ «	» անձուկ
1278	»	27	տափակ «	» տաքուկ
1280	»	6	նոյն «	» այն
1282	«	18	խրոխտ «	» կորովի
1284	«	5	գիտէք «	» գիտէի
1285	«	2	առի և արմատից «	» առի արմատից
»		4	էլ «	» համ էլ
»		5	կը բանի «	» կը բանի
		22	գահակները «	» կոհակները
		30	վաղեց նորա «	» վազեց

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ։